ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05

ք.Երևան «02» «02» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Գրանդ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Վարդանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2014 թվականի օգոստոսի 2-ին կողմերի միջև կնքված ՇՀԱՊՁԲ-11/21 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/15) ծածկագրով պայմանագրի 5.2 կետը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«E դասի սեդան, «Հոնդա-Ակորդ» (պետհամարանիշը 015 LL 55) ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ մատուցել է անպատշաճ որակի ծառայություն,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վարձատրել դրա համար, եթե մատուցված ծառայությունների որակը համապատասխանում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ծառայությունները մատուցվել են սույն պայմանագրի 2.4.1 կետով սահմանված ժամկետում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ Պատվիրատուի բանավոր կամ գրավոր հանձնարարությամբ՝ այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում,

եթե Կատարողի բանավոր կամ գրավոր առաջարկությամբ և Պատվիրատուի բանավոր կամ գրավոր համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանվել:

2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Եթե կատարողը ծառայությունների մատուցելիս խոտանել է իրեն հանձնված գույքը, ապա պարտավոր է իր հաշվին վերականգնել այն: Ընդ որում խոտանված գույքի վերականգնման համար գործում է սույն պայմանագրի 2.1.2 և 2.4.1 կետերով սահմանված դրույթները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1): Կատարողի կողմից Պատվիրատուին մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակները չներկայացնելը համարվում է մատուցված Ծառայության ժամկետի խախտում:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **500 000 (հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1; 2; 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Գրանդ Մոթորս» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Մասիսի 31
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
[illegible]000011007631	ՀՀ 2050022352291001
[illegible]198	ՀՎՀՀ 02250473
[illegible] նախարարության	«Գրանդ Մոթորս» ՍՊԸ-ի
[illegible] կավարի ժ/պ	տնօրեն
[illegible]հսյան	Ա.Վարդանյան
[illegible]ություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«02» «02» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05 ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Գրանդ Մոթորս» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Մասիսի 31
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007631	ՀՀ 20500223522910001
[illegible]07198	ՀՎՀՀ 02250473
[illegible] նախարարության	«Գրանդ Մոթորս» ՍՊԸ-ի
[illegible]կավարի ժ/պ	տնօրեն
[illegible]հսյան	Ա.Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Գնման առարկան՝ ծառայության անվանումը	**«Ե դասի սեդան, «Հոնդա-Ակորդ» (պետհամարանիշը 015 LL 55) ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ**
2. Գնման առարկայի՝ ծառայության մանրամասն նկարագիրը	1. SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցում 2. SU-2 ներառվող ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի փոխարինում: 3. Օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:
3. Գնման առարկայի՝ ծառայությունը մատուցողին ներկայացվող և անհրաժեշտ պահանջները կամ պայմանները	1. Գնագոյացման մեխանիզմների և գնային քաղաքականության թափանցիկության ապահովում: 2. Ներկայացվող գների և կիրառվող զեղչերի նկատմամբ պատվիրատուի կողմից մոնիթորինգ իրականացնելու պայմանների ապահովում: 3. Ընկերությունում տվյալ պահին գործող գնացուցակից մինչև 5 (հինգ) տոկոս զեղչի կիրառում:
4. Ծառայության մատուցման վայրը	ք.Երևան
5. Ծառայության մատուցման սկիզբը	Պայմանագրի կնքման օրը
6. Ծառայության մատուցման ավարտը	«20» «դեկտեմբերի» 2017թ.

7. Գնացուցակ (դրամներով)	1	Շարժիչի յուղի և յուղի զտիչի փոխարինում	0
	2	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	0
	3	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	0
	4	Օդի զտիչի փոխարինում	0
	5	Օդորակիչի զտիչի փոխարինում	0
	6	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000
	7	Անվադողի քանդում և հավաքում	1500
	8	Անիվի հավասարակշռում	1000
	9	Համակարգչային ախտորոշում	3000
	10	Լծակի վռանի փոխարինում	8000
	11	Հարվածամեղմիչի փոշեթիկնոցի փոխարինում	12000
	12	Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում	3000
	13	Առջևի հարվածամեղմիչի հանում և տեղադրում	12000
	14	Հետևի հարվածամեղմիչի հանում և տեղադրում	12000
	15	Փոկի փոխարինում	6000
	16	Լամպի փոխարինում	0
	17	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8000
	18	ՓՏ-ի յուղի փոխարինում	4000
	19	Վառոցքի մոմերի փոխարինում	2000
	20	Վառելանյութի մղիչի հանում և տեղադրում	15000
	21	Փականագործական աշխատանքներ 1 ժ.	10000
	22	Էլեկտրական աշխատանքներ 1 ժ	10000
	23	Զողման աշխատանքներ 1 սմ.	2000-3000
	24	Տվիչի հանում և տեղադրում	3000-5000
	25	Շարժիչի յուղ 1 լ	4000
	26	Շարժիչի յուղի զտիչ	3000
	27	Առջևի արգելակային կոճղակներ	42500
	28	Հետևի արգելակային կոճղակներ	31000
	29	Օդի զտիչ	13000
	30	Օդորակիչի զտիչ	41000
	31	Առջևի կայունարարի վռան	2300
	32	Լծակի վռան	70000
	33	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	25500
	34	Կայունարարի կանգնակ	21500
	35	Առջևի հարվածամեղմիչ	86000
	36	Հետևի հարվածամեղմիչ	81500
	37	Փոկ	18000
	38	Լամպ	5000
	39	ՓՏ-ի յուղ 1 լ	5000
	40	Վառոցքի մոմ 1 հատ	16500
	41	Վառելանյութի մղիչ	165000
	42	Վառոցքի կոճ	38000
	43	Ծնկաձև լիսեռի տվիչ	27000

Հավելված №2
«02» «02» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05 ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007631
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Ա.Գրիգորյան
(մատդրագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանդ Մոթորս» ՍՊԸ
ք. Երևան, Մասիսի 31
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022352291001
ՀՎՀՀ 02250473
«Գրանդ Մոթորս» ՍՊԸ-ի
տնօրեն
Ա.Վարդանյան
(մատդրագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

հ/հ	Գնման առարկայի՝ ծառայության անվանումը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝(ըստ ամիսների աճողական կարգով)												Ընդամենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.	«Է դասի սեդան, «Հոնդա-Ակորդ» (պետհամարանիշը 015 ԼԼ 55) ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	-	50.0	50.0	175.0	175.0	175.0	300.0	300.0	300.0	500.0	500.0	500.0	***500.0***
ԸՆԴԱՄԵՆԸ		**-**	**50.0**	**50.0**	**175.0**	**175.0**	**175.0**	***300.0***	***300.0***	***300.0***	***500.0***	***500.0***	***500.0***	***500.0***

Հավելված №3
«02» «02» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05 ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Գրանդ Մոթորս» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Մասիսի 31
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկորանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007631	ՀՀ 2050022352291001
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02250473

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «02» «02» 2017թ.
Պայմանագրի համարը՝ № ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05
Պատվիրատուն՝ ի դեմս ***բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության ֆինանսահաշվապահական և տնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Լ.Սինանյանի****, և Պայմանագրի կողմն՝ ի դեմս* ***«Գրանդ Մոթորս» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Վարդանյանի****, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N___ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«02» «02» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գրանդ Մոթորս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «02» «02» 2017 թվականին կնքված № ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/05 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն